ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

10 ապրիլի 2023 թվականի թիվ 15-Ա

ք.Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2023 թվականի մարտի 16-ին, իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթի նյութերը՝ պարզեց.

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս, Հեռարձակողների գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) «Հայկական երկրորդ հեռուստալիք» տեսալսողական ծրագրի եթերում Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված դրույթի պահանջի խախտման փաստ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ 2023 թվականի մարտի 16-ին, Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության դիտարկման արդյունքների հիման վրա, 2023 թվականի մարտի 16-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Ըստ արձանագրության, Հեռարձակողի՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության կողմից «Հայկական երկրորդ հեռուստալիք» տեսալսողական ծրագրի 2023 թվականի մարտի 14-ին և 15-ին «ՊՐՈՖ ՖԱԿՏ» հաղորդման շրջանակներում (հաղորդման սկիզբը՝ 14.03.2023թ. ժամը 16:21, կրկնությունը՝ 15.03.2023թ. ժամը 10:40) հաղորդման հյուրի՝ թուրքագետ, քաղաքական վերլուծաբան, «Հայաստանի ժողովրդական

շարժում» հասարակական կազմակերպության համակարգող՝ Վազգեն Պետրոսյանի կողմից մարտի 14-ին՝ ժամը 19:32-19:33 ժամանակահատվածում և մարտի 15-ին՝ ժամը 10:51-10:52 ընկած ժամանակահատվածում հնչել են հետևյալ արտահայտությունները.

«...Անկախ այն բանից, որ իրենք գիտակցում են թե չեն գիտակցում, բայց դավաճանվում է հայությանը և Հայաստանին, այդ իսկ պատճառով իրենք պետք է, իրենք նախ և առաջ չեն գիտակցում, բայց իրենք պետք է իմանան, որ իրենց բավականին դաժան պատիժ է սպասվելու: Իրենց ոչ մեկը ոչ թե չի ներելու, այլ իրենց ընտանիքին էլ չեն ներելու: Ես կարծում եմ, որ նորից պետք է հին ավանդական մոտեցումը հայկականը վերածնվի և նորից սկսեն դավաճաններին իրենց ընտանիքների հետ վերացնել: Սա միակ ճանապարհն է, որ կարող է Հայաստանը նորից Հայաստան դառնալ: Կարող է սա շատ դաժան թվա, բայց երբ, որ կշեռքի նժարի վրա դրված է ամբողջ մի ազգի գոյությունը, գոյաբանական խնդիրը և մի քանի դավաճանի, իրենց ընտանիքի խնդիրը, դա արդեն քննարկման խնդիր չի: Սա է լուծումը...»:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2023 թվականի մարտի 17-ին, թիվ Ե/07/66-23 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը նշված գրության և վարչական վարույթի վերաբերյալ պարզաբանումներ և բացատրություններ չի ներկայացրել:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմինը օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում վարչական իրավախախտման կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով արգելված արարքի հատկանիշներ հայտնաբերելու դեպքում դիմում է իրավասու մարմիններ:

Ղեկավարվելով Օրենքի վերը նշված դրույթով, Հանձնաժողովը 2023 թվականի մարտի 17-ին ՀՀ դատախազություն է ներկայացրել նշված իրավախախտման վերաբերյալ տեսագրությունը՝ համապատասխան ընթացք տալու համար:

2023 թվականի ապրիլի 3-ին Հանձնաժողով է ստացվել ԱԱԾ քննչական դեպարտամենտի ավագ քննիչի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ և 300-րդ հոդվածներով սահմանված կարգով քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելու մասին գրությունը:

ԱԱԾ ավագ քննիչը արձանագրել է, որ հաղորդմամբ չի փաստվում այնպիսի դեպք կամ գործողություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 329-րդ և 330-րդ հոդվածներով նախատեսված արարքներին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:

Ըստ վերը նշված գրության՝ Վազգեն Պետրոսյանն իր հրապարակային ելույթում ի թիվս այլ հանգամանքների իրեն տրված հարցին ի պատասխան արտահայտել է իր կարծիքը, այդ կերպ արտահայտելով իր վերաբերմունքը դավաճաններին իրենց ընտանիքների հետ

վերացնելու, ըստ իրեն՝ նախկինում գործած հին ավանդական մոտեցմանը, որպիսի հայտարարությանը չի հաջորդել քննարկվող հանցակազմերի օբյեկտիվ կողմը կազմող, որևէ հանգամանքներով պայմանավորված՝ ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն, բռնություն գործադրելուն, նման բռնությունն արդարացնելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք:

Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ մասով և 179-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով, ԱԱԾ քննչական դեպարտամենտում հաղորդման հիման վրա քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն չի կազմվել:

Հանձնաժողով է մուտքագրվել նաև ՀՀ դատախազության ԱԱԾ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության 2023 թվականի ապրիլի 3-ի թիվ 07.11/07.11/5828-23 գրությունը, պարզաբանումով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված ընթացակարգը՝ քրեական վարույթ չնախաձեռնելու, օրինականությունը հսկող դատախազի կողմից հաստատելու և սահմանված կարգով քննիչի կողմից հաղորդում ներկայացրած անձին տեղեկացնելու կարգի մասին:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Հեռարձակողը հանդիսանում է Հանձնաժողովի կողմից հեղինակազորված իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով՝ սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Արգելվում է տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը: Ուղիղ եթերի ժամանակ նման կոչեր հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե կոչի հեղինակը ուղիղ եթերում զգուշացվել է իրավախախտման մասին, իսկ կրկնակի կոչի դեպքում ուղիղ եթերը դադարեցվել է»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»

Այսպիսով, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմինը օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում վարչական իրավախախտման կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով արգելված արարքի հատկանիշներ հայտնաբերելու դեպքում դիմել է իրավասու մարմիններ:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ԱԱԾ քննչական դեպարտամենտում վերը նշված հաղորդման հիման վրա քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն չի կազմվել, այսինքն՝ համապատասխան մարմինների կողմից չի հայտնաբերվել և փաստվել այնպիսի դեպք կամ գործողություն, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով Հեռարձակողի նկատմամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1)վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները և ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի մարտի 31-ի թիվ 8-3039 գրությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց՝***

1.«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.ՀԱԿՈԲՅԱՆ**

10 ապրիլի 2023թ.
ք.Երևան